

I. Խափկյուն

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ԳՐՔԻ ԾԴ ԳԼԽԻ ՄԱՍԻՆ

(Աղյուսակում գտնված ևին-լատինական արձանագրության
տեղեկությամբ)

Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, չնայած մի շարք խիստ քննադատությունների, ոչ միայն չի կորցրել իր դերը որպես առաջնակարգ ու հավաստի սկզբնաղբյուր, այլև էպիգրաֆիկ նոր հայտնագործությունների շնորհիվ, տարեց-տարի ավելի մեծ նշանակություն է ստանում որպես փաստական անսպառ նյութերի հիման վրա կառուցած մի հոյակապ պատմագրություն:

Սակայն դեռևս աղբյուրագիտությունը մեծ անելիքներ ունի Խորենացու «Պատմության» վարկը վերականգնելու և նրա մեծատաղանդ հեղինակին ըստ արժանվույն գնահատելու գործում:

Սույն հոդվածով մենք ցանկանում ենք էպիգրաֆիկ նոր նյութի հիման վրա վերանայել Խորենացու «Պատմության» միայն մեկ գլխի (գիրք *երկրորդ, գլուխ Ծ՝*, մասին եղած քննադատությունները և ցույց տալ, որ այս դեպքում ևս, Խորենացին, չնայած իր ձեռքի տակ եղած աղբյուրների միակողմանիության ու անբավարարության, հաղթանակող է դուրս գալիս իր նորագույն քննադատների հանդեպ:

Մ. Խորենացին իր «Պատմության» երկրորդ գրքի ԾԴ [54] գլխում պատմում է հետևյալը.

«Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն. ոչ տալով հարկս: Իսկ Դոմետիանոսի նայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ, որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան և զզօրսն արևմտեան, առաջի արկեալ ածեն տաղնապաւ մինչև ի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ. յորում ընդդէմ դիպեալ Արտաւադդ արևելեայ և հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին: Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ: Զի թէպէտ և ծերագոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զճակատն, և հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հռոմայեցւոց մինչև ի սահմանս Կեսարու: Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն՝ Դոմետիանոս. ոչ ինքըն եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով յանուն նորա կոչեն:

Բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս ի Հռոմ, և զկնի նորա ներուաս ոչ աւելի թագաւորեալ քան

զմի ամ: Ընդ որ առաւել հպարտացեալ գօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին: Ընդ սոսա հայելով Եգիպտացւոց և Կողմանցն Պաղեստինացւոց՝ արգելուն և նոքա ղհարկիլն Հռոմայեցւոց»:

Ինչպես Խորենացին ինքն իսկ ականարկում է, այս գլխի շարադրութեան հիմնական աղբյուրը ժողովրդական առասպելն է, վիպասանքը: Բնական է ենթադրել, որ հեղինակին ծանոթ են եղել նաև այլ գրավոր ու հավաստի աղբյուրներ, որոնց միջոցով նա կարողացել է առասպելից դուրս նրա պատմական կորիզը, և ցույց տալ, որ չնայած առասպելում հրվում է ոմն Դոմետի Հայաստան գալու մասին, բայց իրականում Դոմետը նույն ինքը՝ Դոմետիանոս կայսրն է, որն անձնապես չի եկել Հայաստան, այլ «գհրաման նորա և ղգօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»:

Սակայն Խորենացու քննադատները, հակված լինելով միշտ և ամենուրեք կասկածելու նրա հաղորդած պատմական փաստերին, ընթացել են բոլորովին այլ ուղղութեամբ:

Ելնելով միանգամայն սխալ այն դրույթից, որ հռոմեական քաղաքական շրջանակի մեջ մտնող երկրների կյանքում կատարված բոլոր իրադարձությունները գրանցվել են ժամանակակից հունա-հռոմեական աղբյուրներում, և որ այդ աղբյուրների հիման վրա շարադրված եվրոպական գիտնականների ուսումնասիրություններն անթերի են փաստական կողմով ու շարադրանքի ճշմարտացիությամբ, Խորենացու քննադատների մեծագույն մասը մերժել կամ սրբազրել է նրա հաղորդած այն տվյալները, որոնք արտաքին աղբյուրներով չեն հիմնավորվել:

Մոմզենն իր «Հռոմեական պատմության» մեջ հայտնում է, որ Դոմետիանոսի (81—96 թ.թ.) և ընդհանրապես Փլաբիոսների դինաստիայի առաջին երեք կայսրների օրոք բարեկամական հարաբերությունները Հռոմի և Հայաստանի միջև չեն խախտվել որևէ ընդհարմամբ:¹

Խորենացին այլ բան է ասում, ուրեմն, ըստ նրա քննադատների, կամ նա լավագույն դեպքում սխալվում է, և կամ ստում, հորինում իրենից՝ չեղած ու չլսված բաներ:

Այսպես օրինակ Գ. Խալաթյանցը իր «Армянский эпос в истории Моисея Хоренского» աշխատության մեջ (Մոսկվա, 1896 թ.) ուղղակի և առանց վերապահության քննարկվող գլխի տվյալները որակում է որպես մտացածին («выдумка»), իսկ ժողովրդական երգի վկայակոչումը՝ մի միջոց իր վրայից կեղծիքի պատասխանատվությունը դեն նետելու:

Այսպես է դատում Խալաթյանցը. Խորենացին հենց այնպես, մի բան գրած լինելու համար հորինում է մի ամբողջ գլուխ Դոմետիանոսի դեմ հայերի ընդվզման, զայրացած կայսեր կողմից Հայաստան գործ ուղարկ-

¹ Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Յարուբեկեան, Տփղիս, 1912, էջ 184—185.

² Mommsen, Römische Geschichte, т. V. երկրորդ հրատարակություն, էջ 393.

³ «Хоренский.—գրում է Խալաթյանցը,—прибегает к сочинительству, с целью придать больше оригинальности своему рассказу; но чтобы скрыть свою выдумку, стоящую в явном противоречии с достоверной историей, он сваливает ответственность за нея все на ту же аллегорическую мнимую народную песню, из которой сам историк не мог, однако провести более одного имени—Домет». Г. Халатянц, Арм. эпос, Москва, 1896 г., стр. 319—320.

վելու, Բասինի հովտում տեղի ունեցած ճակատամարտի ու հայերի հաղթանակի մասին: Ապա ցանկանալով հավաստի դարձնել այդ, հենվում է իր իսկ կողմից հորինված ժողովրդական երգի վրա. սակայն մի տողից ավելի «ժողովրդական» երգ չի կարողանում հորինել («Բոմետ | զոմն ասեն» և կեսալ): և այդ խղճուկ տույի մեջ Դոմետիանոս գրելու փոխարեն, որով կկարողանար ճշմարտապատում դարձնել իր հորինվածքը, գրում է Դոմետ, հետո նոր ղլխի է ընկնում, որ դրանք տարբեր անուններ են, և անհրաժեշտ է այդ անվանը կցել նաև մի ծանոթություն այն մասին, որ Դոմետը նույն Դոմետիանոս կայսրն է, և այլն և այլն: Եվ այսպիսի «փաստարկներով» Խալաթյանցը Խորենացու երկրորդ գրքի 54-րդ գլուխը ամբողջովին համարում է կեղծիք, պատմականությունից զուրկ մի հորինվածք:

Շատ ավելի զդույշ է մոտենում քննարկվող ղլխին՝ Ա. Բարադաշյանը: Նա հավատում է Խորենացու ակնարկած առասպելի գոյությանը, ցավ է հայտնում հռոմայեցիների դեմ Արտաշիսի մղած պատերազմի մասին հյուսված ժողովրդական երգի կորստյան առթիվ, բայց անտարակույս է համարում, որ վիպասանքի Դոմետը Ներոնի հռչակավոր գորավար Դոմետիոս Կորբուլոնն է և ոչ Դոմետիանոս կայսրը¹: Այս կարծիքն առանց վերապահության ընդունվել է շատերի կողմից և «ստացել քաղաքացիություն»²:

Խորենացուն չհավատալու և մեղ հետաքրքրող դեպքերի ժամանակադրության տեղաշարժը առաջին դարի վերջերից դեպի ետ՝ դարի կեսերը, Բարադաշյանի կողմից, ըստ երևույթին հիմնավորվում է այն փաստարկով, որ Դոմետիանոսի ժամանակ «չկայր վեճ Հայաստանի համար ի մեզ Պարթևառ և Հոռոմոց»:

Քննադատության այս ելակետային դրույթը թույլ է և շատ կեղծերով խոցելի: Նախ, Խորենացին խոսում է ոչ թե պարթևների և հռոմայեցիների միջև տեղի ունեցած վեճի մասին, այլ հաղորդում է, որ այն ժամանակ, երբ «աղմուկ շփոթից իմն լեալ [էր] յարևմուտս», հայերն ընդդիմացան Հռոմեական տերությանը և զազարեցին հարկ վճարելուց:

Իացի այդ, ինչպես հայտնի է—Դոմետիոս Կորբուլոնը, Արտաշատի ավերիչն ու հայ-պարթևական բանակներին պարտություն մատնողը, ի վերջո ստիպեց պարթևներին ընդունել Հայաստանի հանդեպ Հռոմի դերիշխանությունը, այնինչ Խորենացին խոսում է ոչ թե հայերի կրած պարտության, այլ ընդհակառակը, հռոմեական զորքերի հայկական բանակներից կրած պարտության մասին, մի հանդամանք, որ չափազանց կասկածելի է դարձնում ռազմական իրենց բախտով հակադիր «ոմն Դոմետի» և Դոմետիոս Կորբուլոնի անձնավորությունների նույնացման փորձը:

Անշուշտ, Խորենացին գրելով մեր կողմից քննարկվող իր գլուխը

¹ Ա. Գաբազաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Բ., Թիֆլիս, 1895 թ., էջ 243:

² Այսպես, օրինակ, ակադ. Հ. Մանանդյանը, գրում է. «վիպասանքի մեջ հիշված է եղել, որ Հայաստան եկել էր և պատերազմում էր Արտաշեսի դեմ «Դոմետ ոմն», որը իհարկե ոչ թե Դոմետիանոս կայսրն է, ինչպես սխալ ենթադրում է Խորենացին, այլ հռոմայեցիների գորավար Դոմետիոս Կորբուլոնն է» (Հ. Մանանդյան, ԴՊՍ. աեռութ. Հայ. պատմ. հատոր Ա, Երևան, 1944, էջ 353):

³ Ա. Գաբազաշյ. աեդ., էջ 253:

հիմնականում ժողովրդական երգի՝ վիպասանքի հիման վրա, կարող էր վրիպել, ժամանակագրական սխալներ կատարել և պատմական իրադարձությունները ներկայացնել ոչ իրական դույններով: Սակայն միթե՞ ժողովուրդը կարող էր վիպական երգեր հորինել, նրան պարտվող կողմ ներկայացնելով, այնպիսի մի ռազմական գործչի անվան շուրջը, որն իր հաղթական պատերազմական գործողություններով այնքան ավեր ու ավար էր հասցրել հայ ժողովրդին: Անտարակույս, ոչ: Ուստի Մ. Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի ԾԻ [54] գլխի բացառիկ արժեք ներկայացնող տվյալները ըստ էության չեն հերքված: Միայն նոր ուսումնասիրությունների ու լրացուցիչ փաստերի միջոցով կարելի է լինի պարզել դրանց արժանահավատության աստիճանը:

Այդպիսի նախնական մի ուսումնասիրության հնարավորություններ է ընձեռում 1948 թվականին Ադրբեջանում գտնված հին լատինական արձանագրությունը: Արձանագրության գյուտի պատմությունը հետևյալն է:

1939 թվականին Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայում, Սանգաչալի երկաթուղային կայարանից մոտ 15 կմ. արեւելք, Ջինգիրդաղ լեռան ստորոտում (Կարարիստան) Ի. Մ. Ջաֆարզադին գտավ լեռան վրա փորագրված պատկերներ: 1947 թվականին Ադրբեջանական ՍՍՌ-ի տությունների Ակադեմիայի Ա. Բեքիխանովի անվան Պատմության ինստիտուտը հնագիտական այդ վայրի ուսումնասիրությունը մտցրեց իր գիտական պլանի մեջ, և 1947 ու 1948 թ. թ. ուղարկեց այնտեղ գիտական էքսպեդիցիաներ Բ. Ջաֆարզադեի ղեկավարությամբ:

Վերահիշյալ էքսպեդիցիաների մասնակիցները այդ վայրում և մերձակայքում գրանցեցին ու նկարագրեցին 123 հնագիտական օբեկտներ, որոնք մեծ մասամբ փորագրություններ են քարերի վրա ու պատկերում են եղնիկներ, այծյամներ, առյուծներ, ձիեր, շներ, որսի ու ղոհաբերության տեսարաններ, նավակներ, հավանորեն պաշտամունքային ծեսերի հետ առնչվող իմրական պարեր և այլն: Սակայն էքսպեդիցիայի ամենահետաքրքիր հայտնագործությունը եղավ հռոմեական XII լեգիոնի թողած լատիներեն արձանագրությունը, որը գտնվեց Բոյուկդաշ լեռան ստորոտում, մի մեծ քարաժայռի վրա, 1948 թ. հունիսի 2-ին:¹

Արձանագրությունը, ըստ լեզվաբան պրոֆ. Պ. Խ. Տումբիլի ընթերցման ու համառոտությունների լրացման, կարդացվում է այսպես՝

IMP'ERATORE' DOMITIANO
CAESARE AVGVSTO'
GERMANIC'O'
I'NVICTO' IVLIVS
MAXSIMVS >
LEG'IO' XII FVL'MINATRIX'

Այսինքն՝ «Ընկաղթ իմպերատոր կեսար Օգոստոս Գերմանիկոս Դոմինտիանոսի ժամանակ. Հուլիոս Մաքսիմուս. XII «Կայծակնաշանթ» լեգիոն»:²

¹ Ի. Մ. Джафарзаде, Древне-латинская надпись у подошвы горы Беюкдаш (Доклады Академии Наук Аз. ССР, том IV, № 7, 1948, Баку, стр. 307). Եւս այնտեղ նաև արձանագրության արտատպությունը:

² Նույն տեղում, П. Х. Тумбиль, Римская надпись I века н. э., обнаруженная в пределах Азербайджана (Кабаристан), стр. 312—313.

Արձանագրության ընթերցումը (բացի 5-րդ տողի > նշանից, որը չի բացատրված) բավարար է, ուստի հոռոմեական XII լեգիոնը Բոմետիանոսի իշխանության տարիներին (81—96), ինչ-ինչ քաղաքական ու ռազմական նկատառումներով հասել է մինչև Կասպիականի ափերը։ Հոռոմեական աշխարհագիրների տվյալներով Դոնեց մինչև Կասպիական ծով ընկած ընդարձակածավալ տերիտորիան, չպարփակվելով որոշակի շահմանների մեջ, կոչվել է Ասիական Սարմատիա։

I—II գարու պատմիչ Սվետոնիոսը հաղորդում է, որ Բոմետիանոսի ժամանակ ընդդեմ հոռոմեական տիրակալության Սարմատիայում բռնկվել է ապստամբություն, որին զոհ է գնացել մի լեգիոն զորահրամանատարի հետ միասին։ Բնակատեղի ստիպված է եղել ապստամբության ճնշման նպատակով, հատուկ արշավանք կազմակերպել դեպի Սարմատիա¹։

XII «Կայծակնաշանթ» լեգիոնը, որն արևելյան ռազմաբեմում հանդես է եկել նաև հետագայում, Հուլիոս Մաքսիմուսի հրամանատարությամբ արշավել է Սարմատիա ամենայն հավանականությամբ քաղաքական այս դեպքերի առնչությամբ։

Արձանագրության գտնված վայրն արշավելու համար հոռոմեական զորքերը ինչ ճանապարհ էլ որ ընտրեին, անցնելու էին Հայաստանի վրայով, ուստի և որևէ առնչությամբ չփման մեջ էին մտնելու հայ զինական ուժերի հետ, կամ որպես դաշնակիցներ կամ որպես թշնամիներ։

Պատմական իրադարձությունների այս ոլորտում Մ. Քորենացու «Պատմության» քննարկվող գլուխը, հակառակ նրա քննադատների, հուշում է այլ մեկնություն։

Բոմետիանոս կայսեր ժամանակ Հռոմն ապրում էր ռազմական անհաջողությունների շրջան։ Կայսեր ձեռնարկած արշավանքները հիմնականում պաշտպանողական բնույթ էին կրում և մղվում էին անհրաժեշտության դրդմամբ, ակամա։ Դեռեռալի գլխավորությամբ հյուսիսից արշավում էին դակերը, որոնք հարվածի տակ էին պահում կայսրության պետական մարմնի ամենակենսական մասերը։ Բոմետիանոսն ի վերջո ստիպված եղավ դակերի հետ կնքել Հռոմի համար անպատվաբեր հաշտություն, պարտավորվելով ամեն տարի՝ «նվեր» անվան տակ հարկ վճարել դակերին։

Հռոմի գերիշխանությունն ընդունած ժողովուրդները, օգտվելով ստեղծված քաղաքական նպաստավոր դրությունից, բնական է որ պետք է ձգտեին թոթափել հոռոմեական գաղութարարների ծանր լուծը։ Հայաստանից ոչ հեռու, Սարմատիայում, ինչպես տեսանք, բռնկվում է ապստամբություն, որին զոհ է գնում մի լեգիոն։

Հայաստանում այդ ժամանակ իշխում էին Արտաշես-Տրդատի հաջորդները։ Ծիշտ է, Քորենացին դեպքերը պատմում է կապելով Արտաշեսի անվան հետ, բայց ապացուցված է արդեն, որ Արտաշեսը եղել է հայ թագավորների տիտղոսն այնպես, ինչպես Արշակը՝ պարթևների և Կեսարը հռոմայեցիների մոտ։ Եվ բացի այդ, Քորենացու հիմնական աղբյուրի՝ Ժողո-

¹ Նույն տեղ. էջ 313։

² Տվյալ հարցի համար միևնույն է որ ուղեգծով։ Սաադա-Արաշաա, Թե՛ Տիգրանակերտ-Արաշաա (Այս ուղեգծերի մանրամասն ուսումնասիրությունը տես ակադ. Հ. Մանանդյանի՝ «Էին Հայաստանի ճանապարհները ըստ Պեղինդերյան քարտեզի» աշխատության մեջ)։

վրդական երգի մեջ. համակցման օրենքով, մի հերոսի (Արտաշես-Տրդատի) շուրջն են կենտրոնացվել մի քանի տասնամյակներում տարրեր արտաշեսների կողմից կատարված ու վիպական գունավորություն ստացած պատմական իրողությունները:

Այսպիսով Տրդատի հաջորդներ Արտավազդի և Աշխադարի ժամանակ (82—108),² երբ արևմուտքում Հռոմի գործերը խառնվել էին (ազդուկ շփոթից իմն լեալ յարևմուտս), Արտաշես-Արտավազդը որոշում է դեն նետել հռոմեական անպատվարներ, լուծը և դադարում է հարկ վճարելուց, ու թերևս, ինչպես սարմատացիք, ոչնչացնում է Հայաստանում գտնվող հռոմեական զորամիավորումները (ե...Արտաշէս նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն, ոչ տալով հարկս):

Իրոմեական կայսրը լսելով այդ մասին, ստիպված է լինում զորք ուղարկել Հայաստան ասպատակությունը ճնշելու համար (եիսկ 'Իրոմեականոսի կայսեր ցասուցեալ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէն):

Հռոմայեցիք սկզբից հաջողություններ են ունենում. արևմտյան հայկական գործերի հրամանատար Տիրանը նահանջելով նրանց զորություն և առաջ կապաղովկիայի սահմաններից զալիս հասնում է մինչև Յի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ: Արևելյան ու հյուսիսային գործերով վրա է հասնում Արտավազդը և տալիս ճակատամարտ, որը, շնորհիվ օգնության եկած Սմբատի (հարավային գործերի հրամանատար), ավարտվում է հռոմայեցիների պարտությունով (ե...Սորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն ընդ մէջ անցեալ ապրեցաւցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և դրաւ պատերազմին արարեսւն): Հռոմայեցիք խուճապահար, չետապնդվելով հայերից, փախչում են մինչև ի սահմանս Կեսարում:

Խոռենացու ժամանակ երգվող ժողովրդական առասպելում Հայաստան եկած հռոմեական զորքերի պետ է համարվել Դոմետր: Պատմահայրը դիտել, որ այդ անվան տակ ժողովրդական երգիչներն ի նկատի ունեն Դոմետիանոս կայսրին. բայց և տեղյակ է, որ նա անձամբ չի եկել Հայաստան, այլ զհրաման նորա և զզօրս այլարանելով յաջիւն նորա կոչենն:

Նորագյուտ յատինական արձանագրությունը հաստատում է անուղղակի կերպով Խոռենացու նաև այս տվյալը: Մարմատիայում, ինչպես տեսանք գործել է Դոմետիանոսի անունից, բայց Հուլիոս Մաքսիմուսի հրամանատարությամբ:

Այս դեպքերի մոտավոր ժամանակը որոշելու համար կարևոր են Խոռենացու հաջորդ տողերը՝ «բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս»: Ինչպես ստույգ հայտնի է Դոմետիանոսը սպանվել է 96 թվականին, ուստի հայ-հռոմեական այս բախումները կատարված պետք է լինեն 86 (Հռոմի պարտությունը դակերից) — 96 (Դոմետ. մահը) թվականների միջև:

¹ Հետաքրքիր է ինչել նաև, որ Խոռենացու շարադրության մեջ Արտաշես-Տրդատը պատկերվում է որոշ առիթներով, իսկ ընդհանրապես, Արտավազդը հայկական հիմնական զորայինականների՝ արևելյան ու հյուսիսային գործերի հրամանատարն է:

² Օգտվում ենք Գարազյանի ժամանակագրությունից (տես Քնն. Պատմ., հատոր Բ, էջ 253):

Շատ նշանավոր է, որ Խոռենացին իր տվյալները քաղել է Հայաստանի տերիտորիայում եղած համանման արձանագրությունից:

Ուշագրավ են նաև քննարկվող գլխի հաջորդ դեպքերը։ Ներուասի կարճատև թագավորության ընթացքում (96—98 թ.թ.)¹ ինչպես և Տրայանոսի (98—117) թագավորության առաջին ինը տարիներին, հոռոմայեցիները զբաղված լինելով ներքին հարցերով և դակերի դեմ պատերազմելով, ուժ ու մամանակ չունեին հայկական գործերով զբաղվելու։ Հայերը կարողանում են ամրացնել իրենց նվաճումները և պարթևների հետ մեկտեղ ասպատակում հոռոմեական սահմանները («Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին»)։

Այսպիսով, Մովսես Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԴ [54] գլխում պատմված դեպքերը հիմնականում հավաստի են և հիմնավորվում են պատմական այլ աղբյուրներով (հատկապես Աղբյուրաբանի նորագյուտ լատինական արձանագրությամբ)։ Ուստի և Խորենացու քննադատները այս դեպքում ևս չփաստարկված իրենց հարձակումներով անկարող են ստվեր գցել ի դարու վերջին ասանաժյակի քաղաքական անցուդարձի մասին հաղորդած նրա թանկարժեք տեղեկությունների ու նրա մեծատաղանդ «Պատմության» վրա։

¹ Հստ Խորենացու թագավորել է մի տարի։